

ժամը 9 ընդհանրացված սկիզբ

Ն. Արարատյան



Նամատի ընդհանրացված սկիզբ
վերջում «Նամատի ընդհանրացված
դրույթներում տարբերություն ունի»

Նամատի ընդհանրացված
դրույթներում

**դրույթներում ընդհանրացված տարբերություն
ունի**

Նամատի ընդհանրացված տարբերություն ունի

Արարատյանի մասին, գ. Բյուրակառ, 4-ի, փուն 20

«ՆԱՄԱՏ» ԱԿՏ

Նամատի ընդհանրացված

ՓՄ 0123-21

ՆԱՄԱՏԱՐԱՐՄԱՆ

ՆԱՄԱՏԱՐԱՐՄԱՆ ՈՒՅԻ ՎՃԱՐՄԱՆ ՈՒՅԻ

ՆԱՄԱՏԱՐԱՐՄԱՆ ՈՒՅԻ ՎՃԱՐՄԱՆ ՈՒՅԻ

« 13 » 07 2021թ.

ՆԱՄԱՏԱՐԱՐՄԱՆ ՈՒՅԻ
ՎՃԱՐՄԱՆ ՈՒՅԻ
ՆԱՄԱՏԱՐԱՐՄԱՆ ՈՒՅԻ



ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ **0 1 2 3 - 2 1**
<13> 07 2021թ.

Արագածոտնի մարզի Բյուրականի տուֆերի հանքավայրի հարավային տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության

Ներածական մաս.

Ձեռնարկող՝ «ԲԵԲՈՒԹՅԱՆ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/, /Ա կատեգորիա/
Տեղադրման վայրը՝ Արագածոտնի մարզ, Բյուրական համայնք

«ԲԵԲՈՒԹՅԱՆ» ՍՊԸ ընկերության կողմից /այսուհետ՝ Ընկերություն/ նախատեսվում է Բյուրականի տուֆի հանքավայրի հարավային տեղամասի օգտակար հանածոյի (տուֆ) արդյունահանում: Նախագիծը մշակված է Ընկերության տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2)-րդ կետի գ. ենթակետի, ներկայացված գործունեությունը դասակարգվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Նկարագրական մաս.

Բյուրականի տուֆերի հանքավայրի հարավային տեղամասը վարչական տեսակետից գտնվում է Արագածոտնի մարզում Աշտարակի տարածաշրջանի Բյուրական գյուղից մոտ 1.0կմ դեպի հյուսիս-արևելք, Աշտարակ քաղաքից 32.0կմ հյուսիս-արևմուտք:

Այն զբաղեցնում է Բյուրականի տուֆի հանքային դաշտի հարավային տեղամասին կից տարածքը:

Տեղամասի մոտակա բնակավայրերից են՝ Անտառուտ, Բյուրական, Օրգով, Ագարակ գյուղերը և Աշտարակ քաղաքը, որոնց հետ տեղամասը կապված է գրունտային և ասֆալտապատ ճանապարհներով:

Հանքավայրի հարավային տեղամասի տարածքը մտնում է Արագած լեռան նախալեռնային գոտու մեջ և բնութագրվում է հարթաբլրային ռելիեֆով, բացարձակ բարձրությունները տատանվում են 1600-1655մ սահմաններում:

Երկրաբանահետախուզական աշխատանքների ժամանակ հանքավայրի տարածքում գրունտային ջրեր չեն հայտնաբերվել:



Բյուրականի տուֆերի հանքավայրի հարավային տեղամասի հաշվեկշռային պաշարները A կարգով 141.9 հազ.մ³ քանակով հաստատվել են ՀՀԷԲՊՆ ՕՇՊԳ-ի 15.12.2011թ. N316 որոշումով: Տուֆերի պաշարները հաստատվել են որպես հումք ուղիղ կտրվածքի պատ քարի արդյունահանման համար: Ուղիղ կտրվածքի պատ քարի ելքը 41.5%:

Նախագծված բացահանքի տարեկան արտադրողականությունը ընդունված է 10000մ³ տուֆազանգված: Բացահանքային դաշտի օտարման տարածքը կազմում է 1.6հա, նրա վերջնական եզրագծի մեջ ներառված տուֆերի հաշվեկշռային պաշարները՝ 141900.0մ³, արդյունահանվող պաշարները՝ 126250.0մ³:

Բացահանքային դաշտի օտարման տարածքը կազմում է 1.6հա:

Հանքավայրի տարաշքը բնութագրվում է հետևյալ կոորդինատներով (ArmWGS-84 համակարգով)

1. X =4468938, Y =8438805

2. X =4468938, Y =8438865

3. X =4468684, Y = 8438886

4. X =4468697, Y =8438815

Բացահանքը նախատեսվում է ցածրաստիճանի CMP-026 մակնիշի քարհատ մեքենաներով ուղիղ կտրվածքի պատքարի արդյունահանման համար:

Նախագծվող բացահանքը վերջնական դիրքում կունենա հետևյալ պարամետրերը.

- առավելագույն երկարությունը՝ 240,0մ,
- առավելագույն լայնությունը՝ 75,0մ,
- առավելագույն խորությունը՝ 13,9մ,
- ամենաբարձր և ամենացածր նիշերի միջև եղած տարբերությունը՝ 34մ,
- օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարների քանակը՝ 141,9հազ.մ³,
- օգտակար հանածոյի արդյունաբերական պաշարների քանակը՝ 126,25 հազ.մ³,
- մակաբացման ապարների քանակը՝ 44,53հազ.մ³,
- բացահանքի կողերի առավելագույն թեքությունը՝ 35°,
- մշակվող հանքաստիճանի բարձրությունը՝ 0,42մ:

Մակաբացման ապարները բացահանքային դաշտի սահմաններում ներկայացված են ժամանակակից առաջացումներով 4095,0մ³ ծավալով և փուշտայի շերտով 40035մ³ ծավալով:

Բացահանքի վերերկրյա մասի 1620,24-1640,4մ նիշ ունեցող հանքաստիճանների նախապատրաստումը արդյունահանման կատարվում է բացահանքի արևմտյան մասով մոտեցող գրունտային ավտոճանապարհից ընդլայնական կտրող խրամների և պիոներական խրամների անցումով:

Բացահանքի խորքային մասի 1613,1-1619,82մ նիշ ունեցող հանքաստիճանների բացումը կատարվում է նույն ավտոճանապարհից խմբային բացող թեք խրամից հորիզոնական կտրող խրամների և պիոներական խրամների անցումով: Բացող թեք խրամների լայնությունը հիմքի մասում ընդունված է 7,0մ, թեքությունը 10%:

Հանքարդյունահանման աշխատանքները նախատեսվում է կատարել շուրջտարյա աշխատանքային ռեժիմով, 12.3 տարի ծառայման ժամկետով:

Բացահանքը շահագործման հանձնելու և տուֆազանգվածի արդյունահանմանը պատրաստ 1 ամսվա պաշարներ նախապատրաստելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ լեռնակապիտալ աշխատանքները.

- բացահանքի արևմտյան մասով անցնող գրունտային ավտոճանապարհի կարգաբերում L=220մ, b=7մ, V=300մ³,

